

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

” Ն Ո Ւ Պ Ա Ր ”

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Գ Ա Շ Ի Ր Է

1936

Տ Պ Ա Ր Ա Ն Ս Ա Շ Ա Կ - Մ Ե Ս Ր Ո Պ
Գ Ա Շ Ի Ր Է

Կ Ա Ն Ո Ն Ա Պ Ի Ր

ՆՈՒՊԱՐ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ 1

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

Հ. Բ. Ը. Միութեան հովանաւորութեամբ կազմակերպուած է ՆՈՒՊԱՐ Մարզական Միութիւնը:

Անոր նպատակն է Գահիրէի հայ երիտասարդութեան մարզական, մարմնակրթական եւ մշակութային զարգացման սատարել:

ՆՈՒՊԱՐ Մարզական Միութիւնը քաղաքական եւ կուսակցական որեւէ հանգամանք չունի:

ՅՕԴՈՒԱԾ 2

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Միութիւնը ունի հետեւեալ ժողովները.—

Ա.— Վարիչ ժողով (Conseil d'Administration).

Բ.— Գործադիր Մարմին (Comité Executif).

Գ. — Ենթայանձնախուժման եր իր գործունէութեան
իւրաքանչիւր ճիւղին համար (Sous-Comités).

Ա. — ՎԱՐԻՋ ԺՈՂՈՎ.

Վարիջ ժողովը կը բաղկանայ երեք անդամներէ
գորս կ'ընտրէ Զ. Բ. Ը. Միութեան Եգիպտոսի Շրջա-
նակային Յանձնաժողովը իր անդամներուն մէջէն:
Երկու տարին անգամ մը տեղի կ'ունենայ այս
Մարմնոյն վերանորոգումը, անոր երկու անդամնե-
րուն վիճակաւ դադարումով: Վիճակաւ դադարեալ
անդամները վերընտրելի են:

Վարիջ ժողովը կ'ընտրէ իր մէջէն, երկու տար-
ուան համար, ներկայացուցչական հանգամանքով
Միութեան Նախագահ մը եւ երկու փոխ-Նախագահ-
ներ:

Վարիջ ժողովը կ'ընտրէ Միութեան Գործադիր
Մարմնոյ անդամները որոնցմէ մին պէտք է ըլլայ
Զ. Բ. Ը. Միութեան Գահիրէի Մասնաժողովին ան-
դամներէն:

Վարիջ ժողովը կը գծէ Միութեան սիւլտեճէն, կը
հսկէ անոր կիրարկումին, կը կատարէ արտաքին
յարաբերութիւնները, կառավարական եւ միջազգա-
յին մարզական Մարմիններուն հետ, եւ ամէն իրա-
ւասութիւն ունի Միութեան գործունէութեան վրայ:
Վարիջ ժողովը վէթոյի իրաւունք ունի որոշումնե-
րուն վրայ Գործադիր Մարմնոյ որուն նիստերուն

անայայման կը նախագահեն նախապէս որոշուած
կարգաւ Վարիչ ժողովոյ անդամները: Նախագահող
անդամէն զատ, Վարիչ ժողովոյ մնացեալ երկու
անդամները, միշտ, կրնան ներկայ գտնուիլ Գոր-
ծադիր Մարմնոյ նիստերուն, խորհրդակցական ծայ-
նով: Վարիչ ժողովին երեք անդամները, իրենց
մէջ բաժնելով, կը ստանձնեն ենթայանձնախումբնե-
րու գործունէութեան աջակցելու եւ վերհսկելու
գործը:

Վարիչ ժողովին պարտականութիւնն է պահել
ՆՈՒՊԱՐ Մարզական Միութեան ուղղութիւնը Հ. Բ.
Ը. Միութեան սկզբունքներուն սահմանին մէջ, ա-
նիկա համարատու է նոյն Միութեան Եզրպատասխ
Շրջ. Յանձնաժողովին:

Բ.— ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Գործադիր Մարմինը կը բաղկանայ առ նուազն
7 եւ առ առաւելն 9 անդամներէ որոնք կ'ընտրուին,
ինչպէս նախորդ յօդուածին մէջ յիշուած է, Վարիչ
ժողովին կողմէ: Գործադիր Մարմնոյ վերանորո-
գումը տեղի կ'ունենայ տարին անգամ մը վի-
ճակաւ դադարումովը անդամներուն կիսոյն: Դադար-
եալ անդամները վերընտրելի են:

Որեւէ պարագայի տակ այս Մարմնոյն անդամ-
ներուն թիւը 7էն պակաս չի կրնար ըլլալ:

Գործադիր Մարմինը կ'ունենայ իր Դիւանը հե-

տեւեալ կերպով. — Ատենապետ մը, Փոխ - Ատենա-
պետ մը, Ատենադպիր մը եւ Գանձապետ մը: Դիւա-
նին ընտրութիւնը տեղի կ'ունենայ Գործադիր Մարմ-
նոյ վերանորոգման առթիւ:

Գործադիր Մարմինը կը գումարուի մարզայինքի
եղանակին շարաթը անգամ մը: Իր որոշումները կը
տրուին ձայներու մեծամասնութեամբ: Չայներու
հաւասարութեան պարագային նախագահին ձայնը
գերակշիռ է:

Գործադիր Մարմնոյ պաշտօնն է վարիչ ժողո-
վոյ կողմէ որոշուած պիւտճէի սահմանին մէջ ա-
պահովել Մարզադաշտի բարւոք գործունէութիւնը
իւրաքանչիւր ճիւղի մէջ համագործակցութեամբ
եւ աջակցութեամբ վարիչ ժողովոյ անդամներուն,
իւրաքանչիւրը իր ճիւղին մէջ: Պարտի ամիսը ան-
գամ մը իր համարատուութիւնը ընել վարիչ ժողո-
վին:

Գործադիր մարմինը իւրաքանչիւր տարեշրջա-
նին սկիզբը կը պատրաստէ Միութեան գործունէու-
թեան ծրագիրը եւ զայն վաւերացնել տալէ յետոյ
վարիչ ժողովին, գործադրութեան կը դնէ:

Ան կ'ընտրէ Միութեան գործունէութեան ճիւ-
ղերու յասուկ իր ենթայանձնախումբները: Գործա-
դիր Մարմնոյ անդամները կը ստանձնեն մէկ կամ
մէկէ աւելի ենթայանձնախումբներու ատենապետու-
թիւնը: Գործադիր Մարմինը իրաւասու է, ի հարկին,

լուծելու ենթայանձնախումբները երբ անոնց գործու-
նէութիւնը գոհացուցիչ չգտնէ:

Գործադիր Մարմինը կ'ընդունի կամ կը մերժէ
Միութեան անդամակցութեան թեկնածութիւնները:
Մերժումի պարագային, Գործադիր Մարմինը պար-
տաւոր չէ բացատրութիւն տալու:

Անոր անդամները երբ յաջորդաբար երեք նիս-
տերէ կը բացակային առանց բանաւոր պատճառի,
հրաժարեալ կը նկատուին:

Գ.— ԵՆԹԱՅԱԶՆԱԽՈՒՄԲՆԵՐ

Ենթայանձնախումբները կը բաղկանան 3—5 ան-
դամներէ, որոնց պաշտօնն է ապահովել իրենց յանձ-
նուած ճիւղին զարգացումը ու բարւոյք գործունէու-
թիւնը, որոշուած պիւտճէի սահմանին մէջ: Անոնք
կ'ունենան իրենց Դիւանը՝ Ատենապետ մը, փոխ-
Ատենապետ մը, Ատենադպիր մը եւ խորհրդակիաններ:

Ենթայանձնախումբները իւրաքանչիւր տարեշրջ-
ջանին սկիզբը կը պատրաստեն իրենց յատուկ ճիւ-
ղին գործունէութեան ծրագիրը եւ պիւտճէն եւ զա-
նոնք կ'ենթարկեն Գործադիր Մարմնոյ նկատառու-
թեան առ ի վաւերացում Վարիչ Ժողովէն:

Ենթայանձնախումբները կ'ընտրեն իրենց յատուկ
մարզանքի ճիւղին խմբապետը որուն տուած որո-
շումները, խաղի պահուն, անվիճելի են: Այդ որո-
շումները, սակայն, կրնան վերաքննուիլ պատկան

Ենթայանձնախուճիւն կողմէ, եթէ դիտողութիւններ տեղի ունենան:

Ասոնք համարատու են Գործադիր Մարմնոյ:

ՅՕԴՈՒԱԾ 3

ԱՆԴԱՄԱԿԳՈՒԹԻՒՆ,

Միութեան կրնայ անդամակցիլ ամէն հայ առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան: Թեկնածուն պարտի յանձնառագիր մը լեցնել եւ ներկայացնել Գործադիր Մարմնոյն: Յանձնառագիրները պէտք է ստորագրուին նաեւ երկու անդամներուն կողմէ, որոնք առ նուազն վեց ամիսէ ի վեր անդամակցած են Միութեան:

Անդամակցութեան թեկնածուներուն յանձնառագիրները ութը օր կը կախուին Մարզադաշտի Ակումբին մէջ, որպէսզի Միութեան անդամները իրենց դիտողութիւնները ներկայացնեն, եթէ ունեցողներ կան, Գործադիր Մարմնոյ, որ այդ պայմանաժամէն Վերջ իր որոշումը կուտայ եւ կը հաղորդէ թեկնածուին հարաւոր:

Միութեան անդամները կը դասուին հետեւեալ կերպով. —

Ա. — Գործօն Անդամներ

Բ. — Այցելու Անդամներ

Գ. — Օժանդակ Անդամներ

Դ.— Դայրոցական Անդամներ

Ե.— Պաշտպան Անդամներ

Զ.— Պատուոյ Անդամներ

Ա.— ԳՈՐԾՕՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Միութեան Գործօն Անդամ կը նկատուին անոնք որ կ'անդամակցին մարզանքի որեւէ ճիւղի մը հետեւելու համար: Գործօն անդամները կը վճարեն նուազագոյն 10 Եգ. Ղրշ. մուտքի առւրք մը եւ նուազագոյն 5 Եգ. Ղրշ. ամսավճար մը: Թէնիսի մասնակցող այրերու համար ամսավճարի սակը 20, իսկ կիներու համար 15 Ղրշ. է:

Այլ ճիւղերու հետեւող գործօն անդամները զատէն կը վճարեն նաեւ իւրաքանչիւր ճիւղի համար որոշեալ յաւելուածական սակը:

Գործադիր Ժողովոյ որոշումով եւ առ առաւելն երկու տարի իբր գործօն անդամ կրնան անդամակցիլ Միութեան այն երիտասարդները որոնք ի վիճակի չեն վճարում ընելու: Այսպիսի անդամներու վճարումները կը կատարուին, փոխատուութեան ձեւին ներքեւ, յասկապէս կազմուելիք հիմնադրամէ մը, զորս վերադարձնելու յանձնառու կ'ըլլան, անշուշտ, այդ անդամները, երբ ի վիճակի կը զգան ինքզինքնին: Գործադիր Ժողովոյ որոշումով, բացառիկ պարագաներու առթիւ, կրնայ երկարաժգուել վերոյիշեալ պայմանաժամը: Որեւէ պարագայի տակ

այսպիսի անդամներու թիւը չկրնար անցնիլ Միութեան ընդհանուր անդամներուն թուոյն 10 առ հարիւրը:

Բ.— ԱՅՑԵԼՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Այցելու անդամ կը նկատուին անոնք որ Գահիրէէն առ նուազն 30 քիլոմէթր հեռաւորութեան վերայ կը բնակին եւ կ'անդամակցին Միութեան իրենց Գահիրէ այցելութեան առթիւ օգտուելու համար Մարզադաշտէն: Այցելու անդամները կը վճարեն առ նուազն 10 Եգ. Դահեկան մուտքի տուրք մը եւ տարեկան 40 Եգ. Ղրջ. անդամատուրք մը կանխիկ: Այցելու անդամներուն թէնիսի մասնակցութեան սակն է տարեկան 100 Եգ. Ղրջ., նմանապէս կանխիկ վճարելի:

Գ.— ՕԺԱՆԴԱԿ ԱՆԴԱՄՆԵՐ

Օժանդակ անդամ կը նկատուին անոնք որ Միութեան կ'անդամակցին եւ չեն հետեւիր մարզանքի ճիւղի մը: Օժանդակ անդամներն ալ կը վճարեն նուազագոյն 10 Եգ. Ղրջ. մուտքի տուրք եւ նուազագոյն 5 Եգ. Ղրջ. ամսավճար: Այր եւ կնոջ անդամակցութեան պարագային, կը վճարեն նուազագոյն 20 Եգ. Ղրջ. մուտքի տուրք եւ 100 Եգ. Ղրջ. տարեվճար:

Այր եւ կին անդամները ազատ են միասին բերելու իրենց մինչեւ 10 տարեկան զաւակները Մարգարան առանց որեւէ վճարումի, որոնք չեն կրնար բացարձակապէս մասնակցիլ մարգանքի որեւէ ճիւղի եւ սլարտին յարգել իրենց համար դրուած կանոնները: Անոնք կրնան նաեւ 11—15 տարեկան իրենց զաւակները Մարգարան բերել իւրաքանչիւրին համար տարեկան 30 Եգ. Ղրշ.ի յաւելուածական վճարում մը ընելով: Այս վերջինները, բացառաբար, կրնան մասնակցիլ մարգանքի ճիւղերուն բացի Թէնիսէ որուն մասնակցութեան սակն է 10 Ղրշ. ամսական:

Դ.— ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Հայ դպրոցականները կրնան անդամակցիլ Միութեան տարեկան 30 Եգ. Ղրշ. վճարումով մը: Բացասալի Գործադիր Ժողովոյ որոշումով սահմանափակ թուով հայ ընդունակ դպրոցականներ կրնան անդամակցիլ Միութեան առանց վճարումի: Դպրոցական անդամներու անդամակցութիւնը ինքնաբերաբար կը դադրի երբ վարժարանը աւարտեն կամ թողուն, աւարտելէ առաջ, որեւիցէ պատճառաւ: Ասկէ զատ, Գործադիր Ժողովոյ որոշումով որեւէ ատես կրնայ վերջ տրուիլ դպրոցականներու անդամակցութեան խմբովին կամ անհասարար:

Թէնիսի մասնակցող դպրոցական անդամները կը վճարեն ամսական 10 Եգ. Ղրշ.:

Ե.— ՊԱՇՏՊԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Միութեան Պաշտպան Անդամ կը նկատուին անոնք որ 25 Եգ. Ոսկիի միանուագ նուիրատուութիւն մը կ'ընեն:

Զ.— ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ

Միութեան Պատուոյ Անդամ կը հռչակուին անոնք որ միանուագ 50 Եգ. Ոսկիի նուիրատուութիւն մը կ'ընեն:

ՅՕԴՈՒԱԾ 4

ՀՐԱԺԱՐՈՒՄ ԵՒ ՎԵՐԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Հրաժարող անդամ մը պարտի գրաւոր հաղորդել իր հրաժարականը Գործադիր Մարմնոյ, Միութեան տարեշրջանի լրումէն երկու ամիս առաջ, այսինքն առ առաւելն 30 Յունիսին:

Յաջորդաբար երկու ամիս իր անդամավճարը չհատուցանող անդամը յետ ազդարարութեան կը դադրեցուի անդամակցութենէ:

Միութեան անդամակցութիւնը տարեկան է: Դադրեցուած եւ հրաժարող անդամները կրնան վերստին անդամակցիլ Միութեան վճարելով միանուագ իրենց դադրած կամ հրաժարած տարեշրջանի

անվճար մնացած ամսավճարները եւ պայմանաւ որ
Գործադիր Մարմինը ընդունի անոնց վերանդամակ-
ցութեան առաջարկը: Վերընդունուած անդամները
պարտին նորէն մուտքի տուրք վճարել երբ իրենց
նոր անդամակցութեան առաջին վճարումը շարու-
նակութիւն չկազմեր իրենց նախորդ անդամակցու-
թեան վերջին վճարումին:

ՅՕԴՈՒԱԾ 5

ՀԱՍՈՅԹՆԵՐ ԵՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Միութեան հասոյթները կը կազմեն.—

Մուտքի տուրքերը

Անդամավճարները

Նուիրատուութիւնները

Զանազան հասոյթներ

որոնք վարիչ ժողովոյ որոշման համաձայն եւ ըստ
գծուած պիւտճէի կը յատկացուին Միութեան պէտ-
քերուն: Եթէ տարուէ տարի գումար մը աւելնայ,
վարիչ ժողովը հիմնադրամ մը կը կազմէ գործած-
ուելու նպատակաւ Մարզադաշտին ընդարձակման,
բարելաւման ու ի հարկին սեփականացման:

Միայն անդամավճարի հասոյթներուն մէկ հին-
գերորդը տարուէ տարի կը վճարուի Հ. Բ. Ը. Միու-
թեան Գահիրէի Մասնաժողովին, ՆՈՒՊԱՐ Մարզա-

կան Միութեան անդամներուն իբր հաւարական
անդամատուրքը Հ. Բ. Ը. Միութեան:

ՅՕԴՈՒԱԾ 6

X
Միութեան Մարզադաշտի զանազան բաժանում-
ները կրնան վարձու տրուիլ միայն մարզանքներու
համար, ինչպէս նաեւ նոյն հանգամանքով կրնայ
թոյլատրուիլ ոչ-հայ անհատներու մասնակցութիւնը
զանազան մարզանքի ճիւղերուն յատուկ կանոնադ-
րութեան համաձայն եւ վարիչ ժողովոյ հաւանու-
թեամբ:

ՅՕԴՈՒԱԾ 7

ՏԱՐԵՇՐՁԱՆ

Միութեան տարեշրջանը կը սկսի 1 Սեպտեմբե-
րին եւ կը վերջանայ 31 Օգոստոսին:

ՅՕԴՈՒԱԾ 8

ԱՐՏԱՔՍՈՒՄ

Անդամ մը կ'արտաքսուի երբ Միութեան ոգիին
ու ուղղութեան հակառակ ընթացքի մէջ կը գտնուի
եւ չյարգեր Միութեան կանոնադրութիւնը: Սոյն ո-

որոշումը կը տրուի Գործադիր Մարմնոյ անդամնե-
րուն ամբողջական թուոյն երկու երրորդին ձայնով
եւ գործադրութեան կը դրուի վարիչ ժողովոյ հաս-
տատումէն վերջ:

ՅՕԴՈՒԱԾ 9

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Միութեան ներքին կանոնները հետզհետէ կը
գծուին եւ Գործադիր ժողովին կողմէ վաւերացուելէ
յետոյ ներկայ կանոնագրին շարունակութիւնը կը կազ-
մեն: Իւրաքանչիւր ճիւղի յատուկ ներքին կանոնները
կը պատրաստուին պատկան ենթայանձնախումբին
կողմէ եւ գրաւոր կը ծանուցուին Մարզադաշտին
վրայ:

ՅՕԴՈՒԱԾ 10

Միութեան պաշտօնական գոյնը կապոյտ եւ ու-
կեգոյն է:

ՅՕԴՈՒԱԾ 11

ՀՈՒԾՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ

Միութիւնը կը լուծուի վարիչ ժողովոյ որոշու-
մով եւ այդ պարագային անոր բոլոր գոյքերը,

պատրաստ դրամը եւն. կը պատկանին Հ. Բ. Ը. Մի-
ուլթեան:

ՅՕԴՈՒԱԾ 12

ԲԱՐԵՓՈՒՈՒՄ ԿԱՆՈՆԱԳՐԻ

Ներկայ կանոնագիրը կրնայ բարեփոխուիլ Վա-
րիչ Ժողովոյ առաջարկով Հ. Բ. Ը. Միուլթեան Եզիպ-
տոսի Շրջ. Յանձնաժողովին կողմէ, այս վերջնոյն
ձայներու երկու երրորդին մեծամասնութեամբ:

